Մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Մեծավանի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (19 դասաժամ), տեխնոլոգիայի (2 դասաժամ), կենսաբանության (9 դասաժամ), բնագիտության (3 դասաժամ), բնության (3 դասաժամ), ֆիզիկայի (9 դասաժամ), կերպարվեստի (5 դասաժամ), երգի (2 դասաժամ), Հայաստանի պատմության (2 դասաժամ) , հայոց լեզու և գրականության (12 դասաժամ), Մաթեմատիկայի (17 դասաժամ), Ֆիզկուլտուրայի (23 դասաժամ), ՆԶՊ (1 դրույք), ԹԳՀԳ –ի (10 դասաժամ), ինֆորմատիկայի (1 դասժամ) , արվեստի (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 06.10.2025թ.- ից մինչև 17.10.2025թ.-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025թ հոկտեմբերի 22-ին ՝ ժամը 13:00-ին**, Մեծավանի թիվ 1 միջն. դպրոցում, հասցե՝ Լոռու մարզ, գ.Մեծավան, Զ.Անդրանիկի 46: Տեղեկությունների համար զանգահարել 093-42-33-66 հեռախոսահամարով: